

տարեալ չէ, ոչ մի մարդ՝ առանց մի ուրիշ մարդու կարօտելու՝ կառավարուել չի կարողանալ:

Բաւականանալով ու գոհ լինելով այնով, ինչ որ Դու ինձ էլ իմ ընտանեացս հետ պարզեցէ ես, ջանք անենք, Քո մեզ պարզեածից մեր անմահ հոգւոյ համար ամենամեծ օգուտը դուրս բերել, ու միևնոյն ժամանակ զգուշանալով ի չարն գործածելուց. այդ արած կլինինք, երբ որ առաջացրած կլինինք ընդհանուր գոհութիւն և բաղդաւորութիւն: Ինչի՞ է մեզ պէտք երկրաւոր բաղդաւորութեան բարիքների ամենառատ լիութիւնն, երբ որ իմաստութեամբ գործ ածելը չգիտե՞նք: Բայց ով որ Քեզ, իմ Աստուած, իւր սրտումն ունի, լի է անմահ յուսով:

(Պատմ. Քերմանեցէնէց) Գրիգոր Նովիկոս Աղափիրեանց.

### ՃԱՌ ՎԵՐԱՑՄԱՆ ՄՐՑՈՅ ԽԱՉԻՆ.

Հաւաքուելով այս սուրբ տաճարիս մէջ Տիրոջ Սուրբ Խաչին երկրագութիւն անելու համար, դուք կցանկայիք անշուշտ, եղբարք, լսել մի բաննորա վերայիսաչուածից ձեզ իրատ լինելու համար: Նա լուռ չի մնալ ու կխօսի ձեզ, ինչ որ պէտք է ձեզ համար, եթէ որ ցանկութիւն ունիք լսելու: Խաչուածի վէրքերի վերայ, որ միայն նայենք ուշադրութեամբ, շատ բան կլսենք ու կհասկանանք: Եւ յիրաւի նա իւր վէրքերովը շատ և մեծակշիռ բան է առում ամեն մի մարդու, եւ ահա նորա ասածն. «Ն ո՞ր առաջնորդ է իմ եպելից գույ, ինչն էպան պէտք է առաջնորդ էլլու իւր կառավարում գույ»:

Ոչ թէ մէկ, այլ շատ անգամ, կարծում եմ, կարդացել էք ձեր տանը սուրբ Աւետարանի մէջ անձնուրացութեան մասին, և նոյնպէս շատ անգամ լսել էք Աստուծոյ սուրբ տաճարում մարդուս իւր անձն ուրանալու համար. ուրեմն նոր բան չէ, ինչ որ լսում էք, այլ հինգ արդէն յայտնի բան, և կարելի է, այն բանն է: ինչ որ ամենելին օտար չէ ձեր մոքին և զգացմունքներին: Բայց այդ մեզ համար ոչ նոր բանն ամեն ժամանակ պահանջում է մեր ուշադրութիւնն, ևս առաւել այսօր, որ

երկրագութիւն ենք անում և համբուրում նորան։ Լաւ հասկանանք, եղբարք, Քրիստոսի պատուերի միտքը։

Երբոր Տէրն մեր Յիսուս Քրիստոս կանչում է մեզ գնալ իւր ետեից, այդ նշանակում է, որ մենք գնում ենք մի ուրիշի ետեից։ Ում ետեիցն ենք գնում և ուր։ Մենք ունինք երեք գլխաւոր ճանապարհներ։ Մէկով գնում ենք դէպի զգայական զուարձութիւններն ու վայելչութիւնները, միւսով՝ դէպի երկրաւոր գանձն ու հարստութիւնն, երրորդով՝ դէպի պատիւն ու փառքը։ Ճանապարհները միատեսակ չեն, այլ ջոկ ջոկ տեղեր են տանում մեզ, բայց գլխաւոր կէտն, որտեղից որ սկսվում է, — մէկ է — այդ՝ մեր ինքնասիրութիւնն է, և ընդհանուր սահմանն, որտեղ որ միաւորվում են մեր ճանապարհներն, — դէպի մեր հոգւոյ կորուստը հասնելու տեղն է։ Յաւ չէ արդեօք մեր Փրկչին տեսնել մեզ, որ գնում ենք մարմնոյ և աշխարհի ճանապարհներով դէպի մեր կորուստը։ Յաւով զգածուած լինելով մեր կուրութեան վերայ, նա իրեւ Արարիչ, առաջնորդ ու թագաւոր ազատ արարածներին, չէ ուզում, որ բռնի իշխի որ և իցէ մարդու վերայ։ այլ հրաւիրում է մեզ գնալ իւր ետեից։ Աւրեմն ի՞նչպէս պէտք է գնանք նորա ետեից։ առանց որեւիցէ սախալման։ սորա համար նա ասում է՝ «Հ ա յ ն ա ն ա յ»։ Իրեւ խաղաղութեան և սիրոյ թագաւորութեան հիմնող ու հաստատող, նա չէ կամենում, որ մէկը մտնի իւր թագաւորութեան մէջ պատժից վախենալու համար։ «Հ ա յ ն ա ն ա յ»։ Այդպիսի հրաւերից էլ կարճ ըան կարսղ է արդեօք լինել, ով չի գնալ Քրիստոսի ետեից։

Փրկիչն մեր Յիսուս, կանչելով մեզ գնալ իւր ետեից, պահանջում է մեղնից անձնուրացութիւն։ «Հ ա յ ն ա ն ա յ» է իմ էպիկան գուլ, նույն առանձնայ ի-ը անձը։ Ի՞նչ է նշանակում ուրանալ իւր անձը, — Այն չէ, որ մէկն ինքն իրան ամենեին չսիրի, ինչու որ Տէրը մեր ունեցած սէրը դէպի մեր անձը չափ է համարում, որով չափում է մեր սէրը դէպի մեզ նման մարդը, դէպի մեր ընկերը, անձն ու ընկերու անձին պէս։ այդ պատուերը տալիս է մեզ նորա համար, որ պաշտելու չափ չհետեւնք մեր խելքին, մեր իմաստութեանը, մեր արժանաւորութիւնների, մեր բարիքի ու մեր վայելչութիւնների համար հոգի չտանք։ Մեր ունեցած խելքը, փառքը, հարստութիւնը, մեր առաքինու-

թիւնն, այդ բոլորը պէտք է մեր գլխից հանենք: Մեր խոնար-  
հութեան և նուաստութեան զգացմունքը, մեր անարժանու-  
թեան և տառապելութեան զգացմունքը,—ահա ինչ պէտք է  
զրաղեցնի մեր սիրտն: Խոկ պատուոյ և աղնուութեան զգաց-  
մունքը ի՞նչ նշանակութիւն պէտք է ունենայ: Ա—ի, ինչպէ-  
շատ վնաս են մեզ տալիս այդ մեր զգացմունքներն անձնուրա-  
ցութեան գործի մէջ: Այդ մեր զգացմունքը չէ արդեօք, որ  
պատճառ է դառնում մեզ հպարտանալու անաղնիւ մարդոց  
առաջ: Այդ մեր զգացմունքը չէ արդեօք, որ առաջացնում է  
մեր մէջն անհամբերութիւն և դիւրազրգութիւն, երբ որ  
վիրաւորանք, անպատճութիւն և զրկանք ենք տեսնում: Մի-  
թէ նա չէ, որ սուրեր է հանել տալի պատեաններից: Չէ, մեր  
այդպէս անուանած պատուոյ և աղնուութեան զգացմունքովը  
դժուար է մեզ գնալ նորա ետելից, Որ ասում է՝ Էնյուշ առըլ-  
յէտ, որ հեղ է ու արտով խոնարին, և Որ պատուիրում է. Տիւնիւն-  
յէր Ռշնամիներին, Յեղ ապազնէրին լուսա-նիւն արէտ, Յեղ անիժազներին  
օշինեցէտ, առընտ արէտ Յեղ նեղո-նիւն ապա-պնէրին համար: Քրիստո-  
սին հետեւողը, նորա ետելից գնացողն, ոչ մի քայլ չպէտք է  
յետ մնայ իւր Առաջնորդից: Ամենայն երկրաւոր և աշխար-  
հային բանը մի կողմ պէտք է գնի, եթէ որ ուզում է իւր  
երկնաւոր, իւր աստուածային Ուսուցչին արժանաւոր հե-  
տեղ ու աշակերտ լինել:

Ինքն իրան կամ իւր անձն ուրանալու համար հարկաւոր է  
մեզ արհամարհել մեր իմաստութիւնն, եթէ նա մեծ բան է  
երեսում մեր աչքին ու մեզ հպարտացնում: Պէտք է չնայենք  
մեր պատուոյ վերայ, եթէ նա խարում է մեզ ու ճանապարհից  
հանում, հարկաւոր է մեզ որ սառն աչքով նայենք բոլոր մեր  
բարիքների ու վայելչութիւնների վերայ, եթէ արգելք են լի-  
նում մեր մոքերին վերասլանալու դէպի երկինք: Հնարաւոր  
բան է արդեօք այդ անել: Բայց միթէ մենք չենք անում նոյն-  
պիսի անձնուրացութիւն, երբոր գերի ենք դառնում աշխար-  
հին ու մեր մարմնոյն: Արդեօք շատ անգամ չենք զոհում  
մենք մեր խելքն ու խղճմանքը գարշելի ցանկութեանց: Ար-  
դեօք շատ անգամ չենք արհամարհում մեր կեանքը պատ-  
ճառասիրութեան և փառասիրութեան համար: Արդեօք թանկ  
չէ նստում մեր վերայ այժմեան դարուս մէջ պատշաճից դուրս

չգալը. Հերշտ բան է արդեօք ճշտիւ կատարել այն պահանջներն, որ նորաձեռւթիւն ասուած նոր հարկի պէտքերն է մեր տռաջը ղնում: Մենք չենք նկատում մեր անձնուրացութիւնը. բայց նա մեր մէջն է և կոչվում է աշխարհի անհրաժեշտ պիտոյք և կարեորութիւն: Կամ մի՛թէ չեք կարգում ու չեք լսում, թէ ի՞նչպէս շատերը մուանում են իւրեանց պատիւն, ընտանիքն, ունեցած չունեցածն, և մինչև անգամ կեանքն, երբոր ընկնում են կրակի մէջ՝ իւրեանց ընկերին՝ կամ իրանց նման մարդոց այրուելուց փրկելու համար, կամ ջրի մէջ՝ խեղդուելուց ազատելու համար: Եւ տղատում են: Մի կարծէք, որ այդ ընկերին, կամ իրանց նման մարդոց աղատողները ուրանում են իրանց անձը որ և իցէ շահասիրական ակնկալութիւնից և նպատակից դրդուած: ոչ, նոքա յուղվում են և գործում միայն դէպի մարդկային ազգն ունեցած սիրով: — Նաև շատ են, եղբարք, անձնուրացութեան փորձեր: Այդ փորձելն անկարելի բան չեն: Եւ կարիքը, կամքի հաստատոյժն և առողջ բանականութիւնը կարող է անել մորդուս անձնուրաց, մանաւանդ կենդանի հաւատը դէպի Յիսուս Քրիստոս, ջերմեռանդ սէրը դէպի նա, և հաստատ յոյսը նորա ամենակարող զօրութեան վերայ, որ օգնում են Աստուծոյ շնորհըով:

Միւս պայմանն՝ վեց առնել իւր խաչը: Բայց ինչու նորա խաչը չէ, այլ իւր խաչը. նորա համար, որ նորա խաչը ոչ ոք չէ կարող տանել բայցի իրանից: Ամեն մի մարդ իւր խաչը: Ով որ ուրանում է իւր անձն, նա տէր է դառնում նոր մոքերի, նոր զգացմունքների և նոր գործերի, և բոլորովին տարբեր այնպիսի մոքերից, զգացմունքներից և գործերից, որ ուներ նա մինչեւ անձնուրացութիւնն. և այդպէս բոլորովին վախուին է իւր խաչն, որ առնում է: Այդ բոլորովին տարբեր և բոլորովին ուրիշ կերպով մտածելն, զգալն և գործելն ամեն մի մարդու համար իւր խաչն է, ինչպէս որ ամեն մի մարդ իւր կերպարանքն ունի և ուրիշն չէ նմանում: Այսպէս կայ մարդ, որ առնում է խոնարհամութեան և հեղահոգութեան խաչն, որ իւր սրտից հանի դէն քցի մեծամտութիւնը. մի ուրիշն առնում է աղքատութեան և մուրացկանութեան խաչն, որ սանակով անի իւր շահասիրութիւնն, երբորդն առնում է

միայնութեան, լռակացութեան և ողջախռչութեան խաչն, որ  
իւր մարմնոյ խաղալիքը չդառնայ: Ամեն մի առաքինութիւն,  
որ գնում ենք որ և իցէ մոլութեան տեղն, մի խաչ է, որ տըն-  
կում ենք: ինչու որ շատ գժուար բան է խոնարհ, հեղ, համ-  
քերող և հնազանդող լինելն Աստուծոյ կամքին, ինչպէս որ  
հեղ ու խոնարհ, համքերող ու հնազանդ է Աստուծոյ Որդին  
իւր երկնաւոր Հօրն: Այդ բանն անելու և լինելու համար շատ  
մեծ աշխատութիւններ ու շատ ճիգ թափել պէտք է, շատ ու  
շատ զոհազութիւններ անել: Այս վիճակի մէջ մարդուն պէտք  
է մաքառել միշտ և անդադար իւր կըքերի ու զանկութիւն-  
ների հետ, այս գրութեան մէջ մարդու պէտք է անդադար հսկի  
իւր անձի վերայ և ամեն մի ժամ խնդրի երկնաւոր Հօրից, որ  
իւր զօրութիւնը մեր տկարութիւնների մէջ կտարուի: Այս-  
պէս եղբարք, անձնուրացութիւնն է խաչ, որ լնդ գրկում է  
մարդուս բոլոր գոյութիւնն և շարունակվում է նորա բոլոր  
կենաց մէջ:

Ե- վեր առնի է-ը խաչը: Բացի ներքին խաչերից կան նաև արտաքին խաչեր: Ով որ ուրանումէ իւր անձը, նա պէտք է բարի հոգւով և ուրախ սրաով ընդունի զրկանքների և կորուստների, թշուառութիւնների և դժբաղդութիւնների խաչն, երբ որ նոքա զրկվում են իւր վերայ: Արտաքին խաչերը միտտեամիչն, այլ սմեն մի հետեւողինն էքանն է: Մէկ ուրիշն աշխարհային ունայնութիւններն արհամարհելուն համար ենթարկվումէ ուրիշների ծազրին, իսկ միւսը ճշմարտութեան համար զըրկվումէ տեղից ու ոլաշտօնից, մէկ ուրիշը փորձվումէ հիւանդութիւնով, իսկ մի ուրիշը կորցնելով իւր ծնողքը, կամ իւր ունեցած յունեցածը: Չկայ ոյ մի հետեւող Քրիստոսին, որ կրի այնպիսի խաչ, որ իւր մարդկային ուժից բարձր լինի: «Հաստատուի է Ասպատած, որ ու ցեղ Յեղ՝ Յեր ու ժեղ Բարձր Քորյան Ռէտն Նշ»: Բայց ինչու համար պէտք է տանենք դառնութիւնների և դժբաղդութիւնների խաչը: Միթէ յի կարելի լինել առանց վշտերի: Չէ կարելի: «Ինչու ո՞ւ զար նեղունին նեղունին, պէտք է մունէլ Ասպատածոյ արժայուն Ռէտն Նշ»: Չէ կարելի, որովհետեւ մենք ամենքու, բացառութիւն չահելով նոյնպէս ետքաքինի մարդոց մեղաւորներ ենք. բայց մեղաւորներն արդար դատաստանին համեմատ՝ պէտքէ պատժուին կամ այս կեանքում: Կամ ապա-

գայ կետանքում։ Իսկ այժմ դատեցէք արդեօք տւելի լաւ չէ, որ այս կետանքում մեր մեղքի համար պատիժ կրենք, քան թէ հանդերձեալ կետանքում։ Միիթարական չէ արդեօք, որ խմելով դատարկենք ժամանակաւոր դառնութեանց բաժակը, քանթէ ենթարկուենք յաւիտենական տանջանաց։ Ամեն ասուրը մարդիկ, զգալով իւրեանց մեղքերի ծանրութիւնն, և սարսափելով դժոխային տանջանքների վերայ մտածելուց, ազայում էին Տիրոջ, որ նա ենթարկի իրանց ժամանակաւոր չարչարանքների։ Այս ձեզ, գուշակ է անում վերաբերութիւններ, որ ծնեցնումէ մեր հոգւոյ մէջ մեղանից սիրուած բաղդաւորութիւնը մարդու հետ, ինչպէս փոխումէ նորան։ Եթէ մէկին հանում է ստոր վիճակից և դնում հասարակական ծառայութեան բարձր տստիճանի վերայ, անումէ նորան մեծամիտ և անմերձենալի։ Իսկ եթէ մէկին պարզեռումէ՝ աղքատի ունեցած չնչին գումարի տեղ՝ ուկով բեռնած նաւ, անումէ նորան քարասիրտ և ժլատ։ Արդեօք նա չէ, որ ծանօթացնումէ մեզ փափկասիրութեան և շուայլութեան հետ և բաց է անում անտակութեան բնակարանի դուռն։ Արդեօք նա չէ, որ բերում, բնակեցնումէ մեր մէջ մոռացութիւն Աստուծոյ մասին և արհամարհանք գէպի մեր մերձաւորը՝ կամ ընկերը։ Մենք կկորչէինք, եթէ որ աշխարհիս վերայ բաղդաւորութիւնը մշտական և անփոփոխինէր մեզ համար։ Բարեղաշտ մարդկանցից էլ շատերը հաստատ չէին մնալ, կարելի է, հաւատոյ և առաքինութեան մէջ, եթէ որ նա միշտ և անդադար փաղաքշէր մեզ և լցնէր իւր պարզեներով։ բայց մեր բաղդիցն է, որ նա անհաստատ է, մեր բաղդիցն է, որ Աստուծ զրկումէ մեզ չարչարանքների, դառնութիւնների և վշտերի խայը։ Նա նորոգումէ մեր մէջ այն, ինչ որ վնասուած ու խանգարուած է մեր ինքնաբաւականութիւնով։ բժշկումէ այն, ինչ որ մեր մէջը ցաւագարուած է։ սպիտակ է անում այն, ինչ որ սեացած է։ Այսպէս հպարտ մարդը թշուառութեանց ճշման տակ խոնարհութեան և հեղութեան զգացման է գալիս, խստասիրտը ամոքվումէ, հեշտասէրն անիծումէ իւր անփոյթ և անհոգ կետանքն՝ և խօսք է տալիս ապրել ժուժկալութեամբ, անսանձ ու անկարգ մտածմանց

Միւս կողմից, խայը բժշկումէ հիւանդութիւններ, որ ծնեցնումէ մեր հոգւոյ մէջ մեղանից սիրուած բաղդաւորութիւն։ Իմանումէ արդեօք, ինչ է անում բաղդաւորութիւնը մարդու հետ, ինչպէս փոխումէ նորան։ Եթէ մէկին հանում է ստոր վիճակից և դնում հասարակական ծառայութեան բարձր տստիճանի վերայ, անումէ նորան մեծամիտ և անմերձենալի։ Իսկ եթէ մէկին պարզեռումէ՝ աղքատի ունեցած չնչին գումարի տեղ՝ ուկով բեռնած նաւ, անումէ նորան քարասիրտ և ժլատ։ Արդեօք նա չէ, որ ծանօթացնումէ մեզ փափկասիրութեան և շուայլութեան հետ և բաց է անում անտակութեան բնակարանի դուռն։ Արդեօք նա չէ, որ բերում, բնակեցնումէ մեր մէջ չարչարանքների, դառնութիւնների և վշտերի խայը։ Նա նորոգումէ մեր մէջ այն, ինչ որ վնասուած ու խանգարուած է մեր ինքնաբաւականութիւնով։ բժշկումէ այն, ինչ որ մեր մէջը ցաւագարուած է։ սպիտակ է անում այն, ինչ որ սեացած է։ Այսպէս հպարտ մարդը թշուառութեանց ճշման տակ խոնարհութեան և հեղութեան զգացման է գալիս, խստասիրտը ամոքվումէ, հեշտասէրն անիծումէ իւր անփոյթ և անհոգ կետանքն՝ և խօսք է տալիս ապրել ժուժկալութեամբ, անսանձ ու անկարգ մտածմանց

ու լեզուի տէր մարդը խոստովանումէ՝ իւր մոլորութիւններն, և տարածումէ Խաչելոյ առաջ՝ ուղղօման արտասուքներ թափում։ Կարձն ասեմ, ով որ մէ ժամանակ մնումէ խաչի վարժատան մէջ, այնտեղից դուքս է գալի և աւելի խելօքացած և աւելի իւր վարքն ուղղած։

Տեսնումէք, ովք քրիստոնեայ եղբարք և քորք, որպիսի օգուտ է բերում մեղ խաչը։ Յուրը մարդիկն, երբոր իրանց վերայ առնում էին խաչն՝ ուրախանում էին, երբ որ կրում էին՝ պարծենում էին։ իսկ երբ որ ցած էին դնում՝ արտմում էին։ բայց մենք ընդհակառակը վախենում ենք խաչի մինչեւ անգամ ամենափոքր ծանրութիւնից, ու տրանջաւմ ենք, երբ որ մեղ վերայ գալիս է որեւիցէ նեղութիւն։ Միթէ այսպէս պէտք է գնալ Քրիստոսի ետեից։ Միթէ այսպէս է հարկաւոր խոստովանել մեր հաւատը դէպի մեր Փրկիչը։

Ուրեմն լիր տոնենք անձնուրացութեան խաչն ուրախութեամբ, ու կրենք շնորհակալութեամբ և համբերութեամբ։ Ի՞ւժու առաջ է, և ի՞ւժու նշնու, հաւատացնումէ մեղ ինքը մեր Փրկիչը։ Ամէն։

(Թագավոր. Արքա.) Կարապետ Գ. Տէր Յակովեանց Աղացի։

## ԲԱՆԱՏՐԱԿԱՆ

ԱՌԽՍԱՅ ՀՈԳԵՒԱՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ.\*).

Հոգեւոր Դպրոց են կոչվում այն դպրոցները, որոնք չորս դասարանական դասընթաց ունին և ընդունում են իրանց մէջ ուղղափառ գաւանութեան հոգեորականաց որդիքը տարրական կրթութիւն տալու նոցա։ Ուրեմն դոցա նպատակն է յիշեալ դասակարգի երեխաներին տալ տարրական ուսումն և կարեւոր կրթութիւն։ Թէսկէտ և կանոնին համաձայն պէտք է ընդունուին այդպիսի դպրոցներում միայն հոգեորական կոչմանը պատկանող դասայդպիսի որդիները բայց միւնցոյն ժամանակ ընդունվում են և ուրիշ դաշտագի որդիները։

(\*) Վերայիշեալ աեղեկութիւնները հանած եմ արքունի դպրոցոց ընդհանուր ծրագրեց։